

«ՋՐԵՐԻ ԶԱՎԱԿԻ» ՊԱՇՏԱՍՈՐՆԵՐ ԱՐՏԱՅՈՒՆՈՒՄԸ  
ԱՒՊՈՒԳՐՈՒՅԻՆ ՄԻ ԸԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Հնդիրանական ժողովուրդների պաշտամունքների մեջ իր ուրույն անդն է ունեցել «ջրերի զավակի» պաշտամունքը: Ջրային աստվածների անձնավորում այս աստվածությանը հին հնդիկները կոչում էին Ապամ Նապաա (Apām Napāt) և երբեմն շփոթում էին ջրածին հրեղեն Ազնիի հետ<sup>1</sup>: Հին իրանցիներին ևս նա հայանի է Ապամ Նապաատ (Araut Napāt) անունով և ջրային տարերքն անձնավորելով հանդերձ, ուներ երեղեն-լուսեղեն էակնային բնորոշ գծեր<sup>2</sup>: Ի նկատի առնելով հնդիրանական ժողովուրդների և հայերի ազգակցության փաստը, ինչպես նաև հարևան իրանական ժողովուրդների եետ հայերի ունեցած և հազարամյակների խորքը գնացող շփումները, կարելի է ենթադրել, որ «Ջրերի զավակի» (հին հնդկ. Apām Napāt, արվատ. Araut Napāt) պաշտամունքը գոյություն է ունեցել նաև նախնադարյան և հաջորդ դարաշրջանների Հայաստանում: Ասանավանդ որ, ինչպես Մ. Աբեդյանն է գրում. «Արտավա ժողովրդական հավատալիքներում ետտղ ջրերը տուրք են, դրանց չի կարելի վատ վերաբերվել, արեամարեել, մեջը քթել և այլն: Հայաստանում զքթթե ամենուրեք ևս կարելի է գտնել աղբյուրների ենագույն պաշտամունքի որևէ վերապրուկ: Որոշ աղբյուրներ այնպես են պաշտվում, ինչպես քրիստոնեական սրբավայրերը»: Ապա. «Շատ աղբյուրներ, եատկապես գետեր ու լճեր համարվան ևն րնակաանդիներ առասպելական մարդակերպ և կենդանակերպ էակների, որոնք ունեն երեղեն րնույթ և *երեղեն* էլ կոչվում են»<sup>4</sup>:

Ուսումնասիրողների կարծիքով «Ջրերի զավակի» ենագույն պաշտամունքը մնացուկային ձևով առկա է նաև թուխմանուկների պաշտամունքի մեջ: Սրա ենուրթյան մասին է վկայում *Թուխարք/Թուխարս* բերդանունը (Ճորոխի աջ ափին, Կղարջքի և Տայքի ասանմանագլխին)<sup>5</sup>, որն եեշտությամբ տրոեվում է *թուխ-այր-ք/թուխ-այր-ս* րադադրիչների (ենմա. *այր* րայց *արք*, *հայր*, թայց *հարք*, *եղրայր*, բայց *եղրարք* և այլն): Իսկ որ ոգեղեն ջուրը ըմբոնվել է արական սեռի անձնավսրության տեսքով (եատկապես ջուր-կրակ եակադրման դեպքում), վկայում են Վարանդուսյի և Գանձակի զավառներում գրի առնված եետևյալ հայկական ավանդությունները. 1) «Ասում են, թե ջուրը և կրակը եղրայր և քույր են. մի անգամ եղրայր-ջուրը իջել է սարից, քույր կրակը ասել նրան. «Ե՛կ մի քիչ նստի տաքացի»: Եղրայր ջուրն էլ պատասխանում է. «Ի՛նչ էլ սր քիչ ինձնից խմիր, եովացիր»<sup>6</sup>: 2) «Կրակն ու ջուրը քույր և եղրայր են: Մի անգամ նրանց մեջ վեճ է ծագել, թե ո՞րն է ուժեղ, և վճռել են փորձել: Քույր կրակը յուր ուժը ցույց աալու եամար գնացել սարերի խտտը վառել է, իսկ եղրայր ջուրն էլ գնացել բուրդը եանգեցրել է: Այն օրվանից նրանք միմյանցից րաժսնվել են»<sup>7</sup>:

*Թուխմանուկ* (<թուխ-մանուկ) կոչված ոգիների ջրային րնույթի վկան պետք է եամարել նաև նրանց անվան *թուխ* րադադրիչը: Հետին շրջանում սա ընկալվել է նմանանշուն թուխ րառի «գորշ, մթին, սև» իմաստով (այստեղից էլ սրանց *karaoglan* «սև տղա» թուրքական անվանումը): Մեր կարծիքով, *մանուկ* «երեխա, պատանի» րառին կցված *թուխ* արմատը

1. *Ригведа. Мандалы 1-1У*, Издание подготовила Т. Елизаренкова, М., 1989г., с. 758: Т. В. Гамкрелидзе. В.В. Иванов, *Индоевропейский язык и индоевропейцы*, т. I-II, Тбилиси, 1984, с. 274, 351, 675; Մ. Աբեդյան, *Երկեր*, հ. Ա., Երևան, 1966, էջ 78:

2. *И. брагманский, Атам Напат, "Мифологический словарь"*, М. 1991г., с. 51; Т. В. Гамкрелидзе. В. Иванов, *ИЗВ. АЗГ*, հ. 2, էջ 675:

3. Մ. Աբեդյան, *ՈՉՎ. ԱՂԻ*, հ. 1., Երևան, 1975թ., էջ 51-52:

4. Նույն տեղում, էջ 82-83:

5. Մ. Աբեդյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի*, Երևան, 1963թ., էջ 53:

6. Եր. Լուսյան, *Երկեր*, հ. 2, Երևան, 1988, էջ 418:

7. Նույն տեղում, էջ 158:

հիշյալ թուխ-ի հետ ոչինչ ընդհանուր չունի և արմատակիցն է *թուխս* «ամս, մշուշ, մառախուղ» բառի (Ազուխի բարբառում տյա բառն ունեւր «տպուց» իմաստը)<sup>8</sup>: Թուխս <թուխս, որի վերջածայն *ս* մասնիկի համար հմմտ. *ամսրոս* <*ամս-րո-ս*<sup>9</sup>: Թուխմանուկների ջրային ոգիներ լինելու վկաներն են նաև Արևմտյան և Արևելյան Հայաստաններից հայտնի ետևելու ջրանունները. 1) Թուխմանուկ՝ ջրեոր Վան քաղաքի Սր. նշան եկեղեցում<sup>10</sup>, 2) Թուխ աղբյուր՝ ձմեռանոց Իջևանի շրջանում<sup>11</sup>, 3) Թուխ գետ՝ գետակ Վանա լճո ափագանում. Վանա լիճն է թափվում եարավ-արևմտաքից<sup>12</sup>, 4) Թուխաղբու, Թուխաղբու՝ գետակ Սևանա լճի ափագանում. Վարդենիս<sup>13</sup>: Վերջին գետանվան երկրորդ ձևը կրում է աղբրեջանական թուրքերենի ազդեցությունը. *Թուխաղբու* <*Թուխաղբու* <*Թուխ-ղու-ու*, որտեղ *ղու/ղո*: Հմմտ. *Ղողաղբյուր* «Եվրպակսն աղբյուր, որի ցուրը ժողովրդի հասկացողությամբ դուրի դեղ է»<sup>14</sup>: Ստ. Մալխասյանի վկայությամբ. «Ղողաղբյուրի մոտ թիլի վրա թողնում են մի կտոր իրանց շորերից, իբրև թե դողը թողնում են այնտեղ»<sup>15</sup>: Եթե *Թուխ-ղու-ու* նշանակում է այն նույնը, ինչ նշանակությունն որ ունի *ղողաղբյուր*-ը, ապա *թուխ*-ն այստեղ պարունակելու է «աղբյուր» կամ «ջուր» իմաստը: Ըստ այսմ, *թուխմանուկ* բառը նախապես ընկալվելու էր «ջրամանուկ» իմաստով:

Արգիշտի I-ին արքան (786-764 թթ. մ.թ.ա.) ներկայիս Կարսագետի (Կարսաչայ) վերին եռանգի շրջանում հիշատակում է *Ախուրիանի* անունով մի բնակավայր: Այս անվան գոյությունը մենք համարում ենք արգաւիթը այդ վայրում «ջրերի գավակի» պաշտամունքի: Ուշագրավ է, որ այս տեղանունն հետագայում ձեռք է բերել գետանվանական կիրառում: Հին հայերը *Ախուրեան* էին կոչում ներկայիս Կարսագետը և նրա շարունակությունն հանդիսացող ներկայիս Ախուրյանի ստորին եռանգը<sup>16</sup>: Սա *Ախուրիանի/Ախուրեան* անվան ջրային տարերքի հետ ունեցած կասյի ուղղակի վկան է: Իսկ *Ախուր-եան* անվան առաջին *ախ*-բաղադրիչի «ջուր, գետ» իմաստը՝ ամրապնդում է այդ վկայությունը: Գ. Ջահուկյանը մեր *Achuriani/Ախուրեան* անունը գուցադրում է եռանգ-պելասգյան ծագմամբ այնպիսի գետանունների հետ, ինչպիսիք են *Աչերոն*-ը, *Աչելի* -ը և *Աչելոս*-ը: Արանք բխցվում են հ.հ. \*ak<sup>2</sup> «ջուր, գետ» արմատից<sup>17</sup>: *Աչելոս* անունով գետ կար նաև Փոյուզիայում<sup>18</sup>: Փոյուզական այս գետանվան տարբերակները *Աչելի* -ը և *Աչելոս* -ը, սովորաբար գուցադրվում են բրակյան Timachus պելասգյան *Ἰναχος*, իլյուրական Aquilo, ինվական Akele և այլ գետանունների հետ, դրանց բոլորի *ախ*-/ *ակ*- բաղադրիչները բխցնելով հ.հ. \*ak<sup>2</sup>-ից<sup>19</sup>:

Պարզվում է, որ *Ախուրիանի/Ախուրեան* անվան մեջ առկա *ախ*-արմատը նույն այդ տեսքով հայտնի է ավելի վաղ ժամանակաշրջանից Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններից: Հայաստական *Կասմիախա* (Kašmīaha) տեղանվան մեջ առանձնացնելով -ախ տեղանվանակերտ վերջածանցը, Գ. Ջահուկյանը ավելացնում է. «Այստեանդերձ նույնքան ճշմարտաման է, որ հայաստական տվյալ անվանման մեջ առկա է վերջածանցային -ախ բառը՝ ծագած հ.հ. \*ak<sup>2</sup> «ջուր, գետ» արմատից, որից են լատին. aqua «ջուր», հին բ. գերմ. aha «գետ», ինչպես նաև պելուսգ. աչ «ջուր»<sup>20</sup>: Հիմնատեղիական

8. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.2, Երևան, 1973, էջ 205:

9. Հր. Աճառյան, *Ուլ. աշխ.*, հ. 1, Երևան, 1971, էջ 163:

10. Թ. Հակոբյան, Ստ. Սելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան 1988, էջ 493:

11. Նույն տեղում, էջ 492:

12. Նույն տեղում, էջ 491:

13. Նույն տեղում, էջ 492, 493:

14. Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1944, էջ 535:

15. Նույն տեղում, էջ 535:

16. Ս. Երևանյան *Ուլ. աշխ.*, էջ 32:

17. Գ. Դճաուկյան, *Хайасский язык и его отношение к индоевропейским языкам*, Брест, 1964 г., с. 70, нр. 130; Նույնի՝ Հայերենը և ներկայիսական էին լեզուները, Երևան, 1970թ., էջ 97:

18. «Древнегреческо-русский словарь», составил И. Дворецкий, т. 1, М., 1958г., с. 279.

19. В. Георгиев, *Исследования по сравнительно-историческому языкознанию*, М. 1958 г., с. 94, 130, 139, 263, 271.

20. Գ. Դճաուկյան, *Ուլ. աշխ.*, էջ 70:

(խեթա-ուվիական) լեզուներում հ.-հ. այդ նույն արմատից են սերում խեթերեն *akwanna* և պալայերեն *ahuna* «խմել» բառերը<sup>21</sup>: Ուշագրավ է եատկապես վերջին բառը ինչպես իր ենչյունական տեսքով, այնպես էլ այդ բառը պարունակած լիզվի կողմերի՝ պալայացիների (րալայացիների) եսկական լեռնաշխարհի արևմուտքում կամ եյուսիս-արևմուտքում (Գայլ գետի ավազանում) ունեցած բնակության փաստով<sup>22</sup>: Ինչպես տեսնում ենք, հ.-հ. (\*ak<sup>a</sup> -ից ծագած «ջուր, գետ» իմաստը պարունակած բառեր գոյություն են ունեցել թե՛ թրակա-վաշտական, թե՛ հունա-պելասգյան, թե՛ հինամատովիական լեզուներում: Իսկ այդպիսի ենչյունական և նույնպիսի իմաստ ունեցող բառ պետք է գոյություն ունենար նաև մալիսիայի բնում՝ անկախ այն բանից, թե այդ բառը կունենա՞ր բնիկ եսկական ծագում (կուպականեր հայերենի ենդեվրոպական միջուկին), թե՞ փոխառյալ կլիներ ազգակից ինչ որ լեզվից:

Հ. հ. *k<sup>a</sup>*-ն հայերենում կարող էր տալ ոչ միայն *p* և *b*, այլև խ<sup>23</sup>: Ուրեմն հայերենի ենչյունական օրինաչափությունների համաձայն ևս հ.-հ. \*ak<sup>a</sup> -ից կունենայինք *ախ*: Մեր կարծիքով, «ջուր, ջրախառն ինչ» իմաստով մալիսիայի այդ արմատն է ընկած հետևյալ հայերեն բառերի ենդքում, կամ հանդես է գալիս որպես նրանց բաղադրիչներից մեկը: *Ախուլ* բարբառային բառը՝ «ասուր»,<sup>24</sup> մալիսիայի նշանակելու էր «ջրալի կերակուր, ջրալի ճաշ»՝ ինչպիսին է հենց ապուրը: Չևի և կազմության անսանկյունից ենմտ. *կաթնով* (կաթնով) «կաթնապուր»: *Թարախ* նշանակում է «թաթախված, պլշկած. հեղուկ կամ լույծ նյութի մեջ լրխված կամ քված...», «բոլորովին թրջված, խխման», «թաթախ՝ կեղտոտ ամանները լվալու տաք ջուր»: Սրտնից՝ *թարախել* «հեղուկ կամ լույծ նյութի մեջ մի բան կոխել կամ քսել...», «թաթախելով կեղտոտել»<sup>25</sup>: *Թարախ* բառի բաղադրիչներից երկրորդը *ախ*-ը «ջուր» բառն է, իսկ առաջինը, ըստ երևութից, *թար* «ծեղք» բառը: Ըստ այսմ, անհավանական է դատնում *թարախի* եսմար *թախախ* մալիսիական վերականգնումը: *Թարախ* նշանակում է «լիքի վրա առաջացած թանձր հեղուկ, բաղադրած շիջուկից և թարախային մասնիկներից...»<sup>26</sup>: Այս բառի երկրորդ բաղադրիչը նույն *ախ*-ն է, իսկ առաջինը՝ *թար*-ը, ծագում է հ.-հ. \*(s)ter-ից և տարբերակն է *թրիթ* (թիր-ի-թ) բառի ենդքում ընկած հ.-հ. \*(s)ter-ի: Հմմտ. ավեստ. *star* «պղծվել, մեղանչել», հուն. *στεργανος* -«թրիթ», ռուս. *стерва* «գեշ, լեշ, մեղուտի», թուրք. *toru* «թրիթ», լիավ. *ternenu*, «ապականել, կեղտոտել», լատին. *stercus* «աղբ, թրիթ», նորվ. *stora* «փառ, նիխել, ապականվել» և այլն<sup>27</sup>: *Տարախ* «ցեխ, շաղախ» բառը ևս այս շարքին է պատկանում և կովկասյան լեզուներից փոխառյալ չէ: Նրա երկրորդ բաղադրիչը *ախ*-ն է, իսկ առաջինը սերում է հ.-հ. \*stal- մալիսիականից: Սրա \*stel- տարբերակն է ընկած *ախ* և *ախիլ* բառերի ենդքում, իսկ *stol* առաջինը *առիլ* «մարմնի մեջ արտադրված հեղուկները» *առիլ* «թուր», *առիլով* «թուր, լորձուց» բառերի ենդքում<sup>28</sup>: Հմմտ. հ.-հ. միևնույն արմատից սերած հուն. *σταλαω* «կաթիլ-կաթիլ ծորել», *τελαμα* «աղբ, ճանիճ, ցեխ, շաղախ, ախիլ» բառերը<sup>29</sup>: Այս *առիլ*-ի բարբառային տարբերակն է *ծալախ*-ը, որը նշանակում է «թաց, դժվար մշակելի եղ»<sup>30</sup>: Հմմտ. ան *շաղախ* «ցար, շաղված եղ և կիր» և բարբառային *շորախ* (շորախ) «ճահճուտ» բառերը<sup>31</sup>:

*Ախուրիանի/Ախուրեան* անվան տառից *ախ* բաղադրիչը նույնական է ոչ միայն հայերեն

21. В. Георгиев, *Աշխ.*, էջ 147:

22. О. Герни, *Хетты, М.*, 1987 г., с. 118; В. Хачатрян, *Восточные провинции Хеттской империи /вопросы топонимики/, Ереван, 1971 г., с. 70-73.*

23. Г. Джаякян, *Очерки по истории дописменного периода армянского языка, Ереван, 1967 г., с. 122.*

24. Ա. Մալիսայանց, *Հայերեն բաղադրական բառարան, հ. 1, Երևան, 1944 թ., էջ 20:*

25. Նույն տեղում, հ. 2, Երևան, 1944 թ., էջ 74:

26. Նույն տեղում, հ. 2, էջ 86:

27. Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973 թ., էջ 158, Մ. Фасмер, Этимологический словарь русского языка, т. III, М. 1971 г., с. 756-757.*

28. Հր. Աճառյան, *Աշխ.*, 4, Երևան, 1979 թ., էջ 419:

29. Նույն տեղում, հ. 4, էջ 407:

30. Բ. Թարախյան, *Նշխարներ Հանձնի և Տրապիզոնի բանահյուսության, Երևան, 1986 թ., էջ 226:*

31. Կ. Հակոբյան, *Ներքին Բանահյուսության և Բանահյուսությունը, Երևան, 1974 թ., էջ 450:*

վերոհիշյալ բառերի, այլև հայկական հետևյալ գետանունների համապատասխան բաղադրիչների հետ: *Անձախ* (Անձախի ձոր) է կոչվել Կոտոր գետի վերին ետևանքը, որի շուրջ տարածված Վասսյուրակունի գավառը կոչվում է *Անձախի ձոր*<sup>32</sup>: *Ծանախ* (ծանախայ ձոր) կոչվել է Սև ծովը թափվող և Պարիարյան լեռներից սկիզբ առնող այժմյան Խարշիտ գետի վերին ետևանքը<sup>33</sup>: *Անձախ* <անձ-ախ, իսկ *ծանախ* <ծան-ախ: Ըստ երևույթին, այս *ախ*-ը «ջուր» իմաստով ունեցել է իսկ *ահ* տարրերակը, քանի որ ե.-հ. \*k-ն հայերենում կարող էր վերածվել նաև *h*-ի<sup>34</sup>, այսինքն՝ ե.-հ. \*ak- >եայ. *ահ*: Վերջինս առկա է Երեմիա Մեղրեցու բառարանից եայտնի «*Ահեքեկ*-համոքել, կամ ծխոքել»<sup>35</sup> բառում: Ինչպես Հր. Աճառյանն է նշում, այս բառը իզուր է կապվում պառլավերեն *ահ* (որից ոայ. աեռկ «վնաս, պակասություն») քսաի հետ<sup>36</sup>: Այս նույն տեսքով է արմատն առկա նաև *Ահրանք* անվան մեջ, որը կրում էր հայոց ամսվա 5-րդ օրը: Նրա անվան հիմքում տեսնում են *ահ* «վախ, սարսափ» քսաի եին *ահր* ձևը և ենթասյրում, թե այն եղել է Մաքսի արքայնակներից մեկի ենագույն անվանումը<sup>37</sup>: Մեր կարծիքով, *Ահրանք* բառում *-անք* եոզնակիակերտին նախորդում է \**ահուր*-բառը, որը շեշտադրման պատճառով վերածվել է *ահր*-ի: Իսկ այս \**ահուր*-ը նույնական է Ախուրիանի/Ախուրեան անվան մեջ առկա *ախուր*-ի հետ: Անկուսկած, ինչպես *Ահրանք*-ի գեպում է, *Ախուրիանի/Ախուրեան* անվան ծագումը ևս մեզ տանում է հայոց հնագույն պաշտամունքների ոլորտ:

Հնագույն ժամանակների «ջրերի գավակն» էր լինելու այդ \**ախուրը*. Ինչպես տեսանք, այս անվան առաջին բաղադրիչը եենց «ջուր» էր նշանակում: Ուրեմն, անվան երկրորդ բաղադրիչը պարունակելու է «գավակ» իմաստը: Հ. Աճառյանը հայերեն *ուրջու* «փարթ որդի» բառի առուգարանության կասրկությունը գրում է. «կազմված է *ու* մասնիկով՝ «որդի» նշանակող բառի սեռականից... Ըստ այսմ, *ուրջ*՝ անրուն ձևի սեռականն է *ուր* բառի... Հնի. *putro* պիտի տար հայ \**ուր*»<sup>38</sup>: \**Ախուր*-ի երկրորդ բաղադրիչն, ըստ ամենայնի, այս *ուր* «որդի» բառն է, որը և *ախուր* (աեուր) բառին տալիս է «ջրի որդի, ջրերի գավակ» իմաստը: Ուրարտական արձանագրություններից հայտնի Ախուրիանի բնակավայրն, անշուշտ, այդպես էր կոչվել «ջրերի գավակն»-ի \**Ախուրի*, կողմից եիմնադրված եամարվելու պատճառով: Ըստ այսմ էլ Ախուրեանի տեղանվան մեջ առկա է \**Ախուր* դիցանվանը հավելված *-եան* (<-ի-ան)<sup>39</sup> վերջածանցը: \**Ախուրը* լինելու էր իր անունով *Ախուրեան* (Ախուր-եան) կոչված գետի անձնավորումը (եմնտ. եին եուն., *Αχελως* գետը և նրա անձնավորում *Αχελως* աստվածությունը)<sup>40</sup>: Ախուրիանի բնակավայրի, \**Ախուր* ջրային տարրերի անձնավորում աստվածության և Ախուրեան գետի առասպելարանական շաղկապվածության գուգահեռն է ներկայացնում «աւանն Վարդգէսի» (Վարդգէսաւան), Վարդգէս Մանուկ և Քասախ գետ<sup>41</sup> առասպելարանական շաղկապվածությունը (Վարդգէս անվան *վարդ*-բաղադրիչը դրափոխված ձևն է ենդելլոպական ծագմամբ *վաոր* «ջուր» բառի)<sup>42</sup>:

Նախահայերի «ջրերի գավակ» աստվածությունը կոչվելու էր ոչ միայն \**Ախուր*, այլև կրելու էր նույնիմաստ մեկ այլ անուն՝ \**Վեդուր*: Նրա այս անունն է առկա Սևանա լճի արևմտյան և եարավայրի ավերը ռոնած ուրարտական արձանագրությունների Վեդուրի-

32. Ս. Երեմյան, *նշվ. աշխ.*, էջ 36:

33. Նույն աեղում, էջ 56:

34. Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987թ.*, էջ 134:

35. «Բառագիրք հայոց», *Զննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները* Հ. Աճառյանի, Երևան, 1975թ., էջ 10:

36. Հր. Աճառյան, *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 114:

37. Է. Աղայան, *Ալմարկներ հայոց առնարների պատմության, Երևան, 1986թ.*, էջ 78:

38. Հր. Աճառյան, *նշվ. աշխ.*, հ. 4, էջ 641-642:

39. Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն, էջ 355*:

40. A. Тахо-Годи, Ахелой, «Мифологический словарь», с. 75; «Древнегреческого-русский словарь», т. 1, с. 279.

41. Ս. Խորենացի, «Պատմություն հայոց», Բ., ժգ, Բ, կհ:

42. Հմմտ. Վարդաուտ, Եղի/վարդ, Թաղավարդ /աե'ս Էր. Капанцян, Историко-лингвистические работы к начальной истории армян, Ереван, 1956г., с. 287-288.



«ծնունդ, որդի (սողա կամ աղջիկ անխաիր)»<sup>50</sup>, *ճավակ* (<ճավ-ակ), «զավակ (աղա կամ աղջիկ)»<sup>51</sup>: Դրանց արմատները, եսվանարար, ներկայացնում են ենագույն բարբառային (կամ մոտ ազգակից լեզուներից եկող) տարբերակներ և ծագում են ե.-ե.\*k'eu նախածնից, որից են նաև եին ենդկ. sǝva «ձագ», լատին. cerva «մանր տեսակի կով», կիմր. cyw «ձագ» բառերը<sup>52</sup>:

«Ջրերի զավակի» պաշտամունքի՝ Շիրակում, Սևանի ավաղանում և Ջավախքում տարածված լինելու վկայություններն են եանդիսանում «վիշապներ» կոչված կոթողները: Ինչպես ժամանակին Մ. Արեղյանն էր զգուշացնում. «Այդ վիթխարի կոթողների «վիշապներ» և «ածրսեա» կոչումը կապ չունի նրանց պատկերացրած աստվածության եեա: Նրանք իրենց հսկայական մեծության եամար եետագայում ևն կոչվել վիշապներ կամ ածրսեաներ... Թե այդպես է, երևում է նրանից, որ մի որիչ տեղում, Արագածի լանջին նույնալիսի կոթողներն իրենց վիթխարության եամար կոչվել են «Օղուզի գերեզմաններ», այսինքն՝ հսկայի, ազնավորի գերեզմաններ... Թե այդ կոթողներն իրենց տեղադրությամբ ջրերի վրա-աղբյուրների, լճերի, արեետական ջրամբարների վրա, կապվում են ջրի և ոռոգման սխաեմի եեա, հետևարար վերարերում են ջրի մի աստվածության, այդ սրարզ է»<sup>53</sup>: Ի դեպ, այդ «վիշապներից» եայտնարերված են մյայն Արագածի լանջերին, Գեղամա լեռներում և Ջավախքում<sup>54</sup>: Անկախ նրանից, թե այդ կոթողները եետագայում ինչ աստվածների են վերագրվել (Ասաղիկ-Դերկետոյին<sup>55</sup>, թե Արա Գեղեցիկին<sup>56</sup>)՝ նախապես դրանք ծոնված էին լինելու «Ջրերի զավակ» աստվածությանը:

Լճառատ Ջավախքում ջրի պաշտամունքի ունեցած առաջնային դերի մասին, մեր կարծիքով, խոսում նաև նրա բնակչության առասպելական նախնի Գուշարի անունը: Մովսես Խորենացու երկում կարդում ենք. «Իսկ Գուշարայ, որ յորդուցն Շարայի, ժառանգեաց զԵստն Մթին, որ է Կանգարք, եւ զԿես մասինն Ջաւախուսց, զԿողք, զԾոր, զՉոր, մինչեւ ցամուրն Հնարակերա: Բայց զտէրութիւնն Աշոցաց, եւ զեպեակամութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ»<sup>57</sup>: *Գուշար* անձնանունը (նախկինում դիցանուն) հստակ ստուգարանություն ունի՝ կազմված է *գուշ*-արմատից և *-ար* վերջածանցից: Վերջինս առկա է *արդար*, *գալար*, *երկար*, *կերպար*, *պալար* և այլ բառերում<sup>58</sup>: *Գուշարի*-ի *գուշ*-արմար եայերեն *գուշ* բառն է, որը նշանակում է «միակաուր փայտից բոլորչի աման, մեջը շատ կամ քիչ փոսցրած՝ զանազան պիտույքների եամար», «ապելի մեծ դիրքով փայտե սկավառակ՝ եասկապես յուղ պաեելու եամար», «ջրաղացի ամբարի տակ դրած ամանը, որի մեջ եոսում է ցորեմը...», «զանազան մեծության եողե ամաններ, իար կամ ծանծաղ, այլևայլ պիտույքների եամար, օր. մածուն մակարղելու, կերակուր ուտելու...», «մեջը փոս ընկած՝ եովանիի ձև ունեցող առարկա», «ծիան, ծիւնելույզ (եովանոցաձև...)»<sup>59</sup>:

*Գուշ* բառը եոսայի ստուգարանություն չունի<sup>60</sup>, ոստ երևութին, այն ծագումով նույնական է *գուշ*(ն) բառին: Այս դեպքում *գուշի* ավելի եին ձևը լինելու էր *\*գուրշ* (եմմտ. *գոշ* < *գորշ*, *խաշ*-*խարշ*, *քաշ* < *քարշ* և այլն): Իսկ *\*գուրշ* և *գուր* համապատասխանության տեսանկյունից հմմտ. *քարշամ* և *քառամ* նույնածագում և նույնիմաստ բառերը<sup>61</sup>: *Գուշ* (գուրշ) և *գուր* (գուրն)

50. Նույն տեղում, հ. 2, էջ 15:

51. Նույն տեղում, հ. 3, Երևան, 1944թ., էջ 205:

52. *Wörterbuch Sanskrit-Deutsch von Prof. Dr. Dr. Habil. Klaus Mylius, Leipzig, 1980, S. 479; Н. X. Дворецкий, Латинско-русский словарь, М. 1976, с. 176; Г. Досаукян, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, 1967, с. 31.*

53. Մ. Արեղյան, *Ոշվ. աշխ.*, հ. է, էջ 153:

54. Նույն տեղում, էջ 103-107:

55. Նույն տեղում, էջ 151-171:

56. Գր. Ղափանցյան, *Արա Գեղեցիկի պաշտամունքը*, Երևան, 1945թ., էջ 112-154:

57. Մ. Խորենացի, Բ. ը:

58. Գ. Չաեուկյան, *Հայոց լեզվի պատմություն*, էջ 235; Մ. Մոգրաղյան, *Բառագիտություն*, «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. 2, Երևան, 1975թ., էջ 90:

59. Մա. Մալխայանց, *Ոշվ. աշխ.*, հ. 1, էջ 470:

60. Հր. Աճառյան, *Ոշվ. աշխ.*, հ. 1, էջ 596:

61. Նույն տեղում, հ. 2, էջ 156:

բառերի ծագումնաբանական կապի վկան են դրանց իմաստային առնչությունները ևս: *Գուռ* նշանակում է. «քարե կամ փայտե փոքր ավազան, որ դնում են աղբյուրի առաջ կամ գոմերում և նրանից ջրում անասուններին», «երկայն գերան, երեսից տաշած և մեջը փորած. խողովակի ձևով, մի ծայրը բաց, մյուսը փակ, որ արոտատեղերում դնում են աղբյուրի առաջ և մեջը եավաքված ջրով ջրում են նախիրը կլամ ետը», «քաղցիքի ավազան, որի մեջ վազում է ջուրը ծորակից, և որից թասերով ջուր են վերցնում լողանալու համար», «փայտե փոքր աման՝ այլևայլ գործածության համար, օր. խմոր դնելու, լակ ածելու և այլն», «հնձան», «տանիքից դուրս երկարացրած փայտե խողովակ, որով անձրևի ջուրը վար կվազե, ջրորդան», «կովի թրիքից շինած գոգած և աման, որի մեջ գարթեցնում են շերամի որդը»<sup>62</sup>: Հր. Աճառյանը մեր բառն համարում է փոխառյալ ասորերենից, որից անցել է նաև արաբերենին<sup>63</sup>: Սակայն, սիլաբի ենթադրել, որ հայերենն է փոխառու կողմը: Դա երևում է նախ հայերեն *գուռ* (\*գուրշ) և *առու* (առում) բառերի լեզվաբանական և իմաստաբանական կապից: Այսպես, հայերեն *գուռ*-ի պարունակած իմաստները անհամեմատ բազմազան են, քան ասորերեն *gurna* (արա «դույլ, ջրաման») բառինը: Վերջապես, մյուս սեմական լեզուներում համապատասխան բառերը չկան, ինչը վկայում է ասորերեն բառի փոխառյալ լինելու մասին:

*Գուռ* բառի դեռևս նախահայերենում գոյություն ունեցած լինելու ապացույց կարելի է համարել ասորեստանյան արձանագրությունների հիշատակած *Guriana* երկրանունը, և Ստրաբոնի հիշատակած *Γουρανοιο* ցեղանունը: Ասորեստանյան արձանագրությունների համաձայն, Գուռիանիա երկիրը տեղադրվում է Ուրարտուի և Գամիռուի /Կիմերների անդրկովկասյան ցեղամիություն/ միջև<sup>64</sup>: Ուրարտագետներն այս Գուռիանիան նույնացնում են Սարգուրի 2-րդի (764-735 թթ. մ.թ.ա.) կողմից էրիախի (Շիրակ) և Իգամի (Չրդրըր լճից հարավ) ցեղային երկրների հարևանությամբ հիշատակված *Quriani* երկրի հետ: Վերջինս տեղադրվում է նրանցից Երուսիս՝ հիմնականում համընկնելով հետագա Ջավախքին<sup>65</sup>: Հետագա Ջավախքի ոչ թե *Zabaha*, այլ *Guriana/Quriani* անվամբ հանդես գալը բողոքովին էլ չի նշանակում, թե այդ ցեղային երկիրը կողքով է իր ինքնուրույնությունը և ընդգրկվել էր Իգամիի կազմի մեջ<sup>66</sup>: Սարգուրի 2-րդը պարզապես նրան կոչում է հարևանների կովմից նրան տրված անունով. *Guriana* <\**գուռ-իան-ի*/\**գուռ-հան-ի*, այսինքն՝ «լճայինների (երկիր)»: Որ ասորեստանյան և ուրարտական արձանագրություններում հիշատակված ձևերը իսկապես երկրանուններ չեն, այլ ցեղանուններ, հաստատվում է Ստրաբոնի վկայությամբ. «Ասում են նաև, զրում է նա, թե ինչ-որ թրակացիք (կոչված սարապարաս, այն է՝ զրուխ կտորո) բնակվել են Հայաստանից վերև՝ գուրանացոց և մարաց մոտ»<sup>67</sup>:

Վերոհիշյալ ցեղանուն-տեղանունների «լճային» ստուգաբանությունն օգտին է խոսում ամբողջ վերոշարադրյալը, բայց հատկապես՝ Ջավախքի և նրա շրջակայքի լճաշատ լինելու իրադրությունը: Հիշենք դրանցից մեծերը՝ Փարվանա, Մադամո, Մադաթափա, Խանչալի, Խոզափին, Տարացկուր (բոլորը Ջավախքում), Չրդրըր (Երուսիսային Վանանդում), Արփա (Աշոցքում): Այսպիսով, թե՛ Գուռիի՝ Ջավախքի և հայկական շրջանների բնակչության առասպելական նախնու, թե՛ տեղի ու նրա բնակչության հնագույն անուններն ունեն «լճային» ստուգաբանություն և պայմանավորված են ինչպես տեղի բնակչության կամ պայմաններով, այնպես էլ տեղի բնակչության այդ պայմանների հետ անքակտելի կապի մեջ եղած պաշտամունքներով: Վերջիններիս մեջ առաջնայինը լինելու էր «Ջրերի գավակի» (գուցե և նույն Գուռալի) պաշտամունքը:

62. Մա. Մախապյանց, *Նշվ. աշխ.*, հ. 1, էջ 470:

63. Հր. Աճառյան, *Նշվ. աշխ.*, հ. 1, էջ 597:

64. Կ. Արտյոնյան, *Նշվ. աշխ.*, էջ 67:

65. Կ. Дьяконов, *Предыстория армянского народа*. Ереван, 1968г., с. 169, пр. 251; карта /с. 180-181/.

66. Կ. Արտյոնյան, *Бийинили /Урарту/: военно-политическая история и вопросы топонимики*, Ереван, 1970г., с. 408.

67. Strabo, XI, 14, 14 (*Ստրաբոն, Էադեց և քարգմանեց Հր. Աճառյան*), *Երևան*, 1940թ., էջ 65:

## ОТРАЖЕНИЕ КУЛЬТА "СЫНА ВОД" В НЕСКОЛЬКИХ ТОПОНИМАХ КЛИНОПИСНОГО ПЕРИОДА

РЕЗЮМЕ

С. ПЕТРОСЯН, Ц. ПЕТРОСЯН, П. ПЕТРОСЯН.

В недрах общеиндоевропейской мифологии зарождались образы индоиранского божества Апам Напат /"сын вод, отпрыск вод"/ и протоармянского божества "сына воды". В разных районах Армянского нагорья он носил разные имена. В Шираке и Вананде он назывался \*Аһиг. Имя состоит из компонентов аһ "вода" и иг "сын". От этого теонима происходит урбоним урартского периода Аһигипи и по-тамоним Цһипрһшй. В бассейне озера Севан это божество называлось \*Уедиг. Имя состоит из компонентов иед "вода, река" и иг "сын". От этого имени происходит этноним Ueduri и хороним Ueduri-Etini урартского периода. В Джавахке это божество называлось \*Зааһ. Имя состоит из компонентов заи "отпрыск" и аһ "вода". От этого теонима происходит хороним Zabaһа урартского периода.

По древнеармянским эпическим сказаниям Гушар-сын Шарая /эпонима Ширака и его жителей/, предок древнейших жителей Джавахка и сопредельных районов. Имя Գ-ըշր одного происхождения как со словом գըշ "поилка, миска, углубление, куда стекает вода из родника" и т. п., так и со словом գըլ "поилка, небольшой бассейн /в бане/" и т. п. Антропоним /теоним/ Գ-ըշր состоит из компонентов Գ-ըշ и шр, где шр -суффикс. Прототип գըշ-в գըրշ=գըլ/ср. րըրշի=րըլшй/. Из того же идеологического круга и из того же региона происходят этноним Gouganioi античных и хоронимы Gigania ассирийских источников. В основе этих названий лежит протоармянское слово \*գըլ "бассейн, пруд, озеро" /Джавахк и сопредельные районы изобилует озерами и прудами/. Значит, мы можем считать, что прототип Гушара-божество, связанное с водой, т. е. прототип Гушара-дух воды, "сын вод".